ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 դեկտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

182
(2662)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 156

«Իմ հայտարարած բանաձեւով խաղաղության օրակարգն իրագործելու պատասխանատվություն եմ ստանձնում ես, ակնկալում եմ խորհրդարանական մեծամասնության եւ ժողովրդի աջակցությունը»,- 2020 թվականի մայիսի 10-ին հայտարարել էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նրա այս հայտարարության օրերին եւ դրանից հետո էլ ակնհայտ էր, որ խաղաղության օրակարգ փաստացի գոյություն չունի: Դրա վառ ապացույցն այն հանգամանքն է նաեւ, որ Ադրբեջանն արդեն հինգ օր է՝ փակ է պահում Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը, որը կարող է հանգեցնել հումանիտար աղետի: Եվ չնայած մինչ այս Փաշինյանը խոսում էր խաղաղության մասին, սակայն արդեն երեկ՝ կառավարության նիստի ժամանակ, իր ելույթում մի քանի կետերով մեղադրեց ադրբեջանական կողմին 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը խախտելու համար: Չնայած դրան՝ Նիկոլ Փաշինյանը եւս մեկ անգամ հայտարարեց, թե պատրաստ է կատարել եռակողմ հայտարարության դրույթները: «Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է եռակողմ հայտարարության 9-րդ կետի դրույթների իրականացմանը, որը, հիշեցնեմ, տարածաշրջանի տնտեսական եւ տրանսպորտային կապերի ապաշրջափակման մասին է: Եռակողմ հայտարարությունն այս գործընթացում Հայաստանի Հանրապետության սուվերենության որեւէ սահմանափակում չի նախատեսում, եւ, հետեւաբար, Հայաստանը ցանկացած պահի պատրաստ է ճանապարհների վերաբացմանը, նոր ճանապարհների կառուցմանը, ինչպես նաեւ շահագործմանը, ինչպես նախատեսված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»,- նշել էր նա: Այսինքն՝ նա ժողովրդին խոստացել էր խաղաղություն, սակայն չիրականացրեց դա՝ կրկին խաբելով ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Ստեփանակերտ-Գորիս միջպետական մայրուղին փակ է արդեն 5 օր: Արցախը հումանիտար աղետի շեմին է: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել է ՀՀ նախագահի աշխատակազմ՝ փորձելով հասկանալ, թե ինչ է մտածում ստեղծված իրավիճակի վերաբերյալ Վահագն Խաչատուրյանը: ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչությունից ստացել ենք պատասխան, որը ներկայացնում ենք ստորեւ. «Հանրապետության նախագահի դիրքորոշումները կամ մոտեցումները որեւէ հարցի վերաբերյալ անհրաժեշտության դեպքում հրապարակվում են նախագահի պաշտոնական կայքում եւ սոցիալական հարթակների պաշտոնական օգտահաշիվներում: Լաչինի հումանիտար միջանցքի անխափան գործունեությունը պետք է իրականացվի՝ համաձայն 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության: Միջանցքի ապաշրջափակումը եւ գազամատակարարման վերականգնումը կենսական անհրաժեշտություն է Արցախի բնակչության համար, որը կանգնած է հումանիտար լրջագույն ճգնաժամի վտանգի առաջ», - ասված է պատասխանում:

Արցախն Ադրբեջանի կողմից շրջափակման մեջ հայտնվելուց ի վեր միջազգային տարբեր կառույցների երեւանյան գրասենյակների, ինչպես նաեւ դեսպանատների առջեւ հանրահավաքներ են տեղի ունենում: Դրանց մասնակցում են ամենատարբեր կուսակցությունների, քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, պաշտոնյաներ, Արցախի մեր հայրենակիցները: «Ժողովուրդ» օրաթերթը նկատել է, որ իրազեկման կամ բողոքի հանրահավաքներին չեն մասնակցում «Ապրելու երկիր» կուսակցության անդամները: Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի խորհրդական, «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանից հետաքրքրվեցինք՝ Արցախում կառավարական կաբինետի ղեկավարումը ստանձնելուց զատ, իրենց քաղաքական ուժն արդյոք նաեւ այս հարցում է կիսում արցախյան իշխանությունների քաղաքական բեռը, ու ինչով է բացատրում հանգամանքը, որ իրենց կուսակիցները հանրահավաքներին չեն մասնակցում: ««Ապրելու երկիր» կուսակցության ներկայացուցիչները Արցախի համար կազմակերպվող հանրահավաքներին մասնակցելիս չեն նշում, որ կուսակցական են: Կուսակցության անդամները եւ՛ երեկ, եւ՛ դրա առաջին օրը բողոքի բոլոր միջոցառումներին մասնակցել են, բայց այդ մասնակցությանը կուսակցական երանգ տալու անհրաժեշտություն չկա: Այսինքն՝ մասնակցում ենք, բայց չենք նշում, որ կուսակցությունը ներկա է եղել»,- մեզ հետ զրույցում ասաց Առաքելյանն ու ավելացրեց, որ այս հարցի շրջանակներում կուսակցական գործունեություն ծավալելը ո՛չ արդյունավետ է, ո՛չ էլ ճիշտ: Իսկ ի՞նչ արդյունավետություն ունի ծպտված մասնակցությունը:

Արդեն հինգերորդ օրն է, ինչ ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանն աշխատանքից ազատման դիմում է ներկայացրել, սակայն մինչեւ այսօր նրան փոխարինող չի նշանակվել, այնինչ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար արդեն նշանակվել է Ժաննա Անդրեասյանը: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ական իր աղբյուրներից տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը փոխվարչապետի թեկնածուի հարցում երկընտրանքի եւ փնտրտուքների մեջ է: Բանն այն է, որ այս ընթացքում ամեն ինչ արվում է, որպեսզի փոխվարչապետի պաշտոնում նշանակվի ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը: Նրա նշանակումն ուշանում է, քանի որ Նիկոլ Փաշինյանը դեռ հստակ որոշում չունի: Այս հանգամանքն էլ իր պատճառներն ունի: ՔՊ-ական մեր աղբյուրները հայտնում են, որ երկընտրանքի պատճառն այն դժգոհություններն են եղել, որոնք առկա են ՔՊ վարչության անդամների կողմից Արայիկ Հարությունյանի վերաբերյալ: Նա կտրվել է իրականությունից, նախկին ընկերներին վերից է նայում եւ, գումարած դրան, վատ կառավարիչ է: Փոխվարչապետի փնտրտուքները դեռ շարունակվում են...

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏՔ Է ԽԱՌՆՎԻ ԵՄ-Ն

Դեկտեմբերի 11-ից քաղաքացիական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ, ներկայանալով որպես բնապահպան ակտիվիստներ, շինծու բնապահպանական մտահոգությունների պատրվակով փակել են Արցախը Հայաստանի եւ աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Այս ընթացքում դատապարտող եւ Ադրբեջանին Լաչինի միջանցքը բացելու կոչեր եւ հայտարարություններ հնչեցին տարբեր երկրների եւ կազմակերպությունների կողմից:

ArmLur.am-ը Լաչինի միջանցքում տիրող իրավիճակի վերաբերյալ զրուցել է նաեւ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովում Լյուքսեմբուրգի ներկայացուցիչ, պատգամավոր Սվեն Կլեմենտի հետ:

-Պարոն Կլեմենտ, արդեն չորրորդ օրն է՝ Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը փակ է, Արցախը կանգնած է հումանիտար աղետի շեմին: Նախ՝ Ձեր տեսակետը՝ տիրող իրավիճակի վերաբերյալ:

-Իրավիճակը դառնում է ավելի ու ավելի անկայուն, քանի որ, ըստ հաղորդագրությունների, տարածաշրջանում բազմաթիվ ակտիվ դերակատարներ կան: ԵՄ-ն կոչ է արել Ադրբեջանի իշխանություններին ապահովել անվտանգ անցում միջանցքով, սակայն կոնֆլիկտների ժամանակ անվտանգությունը հարաբերական է, երբ բազմաթիվ դերակատարներ ունեն բազմաթիվ շահեր, եւ դրանք բախվում են՝ մտահոգվելով, որ ռուսները վերահսկում են անցումը եւ անգամ պատրաստ են ուժով պաշտպանել իրենց շահերը: Դա կարեւոր է: Այս իրավիճակներում կարելի է միայն բանականության կոչ անել:

-Դուք ինչպե՞ս եք տեսնում հարցի կարգավորումը:

-Բնականաբար, 2020 թվականի նոյեմբերի 9-ի՝ կրակի դադարեցման մասին հայտարարությունը պետք է պահպանվի, եւ կողմերը հետեւեն դրան: Ես նույնպես կոչ եմ անում հետեւել կրակի դադարեցման մասին պայմանավորվածությանը: Ճանապարհները պետք է բաց մնան, որպեսզի պահեն կապը երկու կողմերի միջեւ: Այդկերպ 3+3-ը լավ ֆորմատ եւ քայլ կարող էր լինել, սակայն մասամբ արդյունավետ էր, քանի որ Վրաստանը հարգելի կպատճառներով հրաժարվեց մասնակցել այդ ֆորմատին: Այդպիսի ձեւաչափերը կարողանում են համախմբել տարածաշրջանի տարբեր երկրներին եւ բանակցությունների միջոցով հնարավորություն են ստեղծում հասնել մի կետի, որտեղ հարեւան երկրներն ունենում են ընդհանուր կետեր: ՄԱԿ-ի խաղաղապահների տեղակայման հարցը նույնպես պետք է դիտարկվի եւ ներառվի ՄԱԿ ԳԱ-ի եւ ՄԱԿ-ի ԱԽ-ի օրակարգում:

-Միջազգային հանրությունն այնքան էլ ակտիվ չէ, եւ դատապարտող հայտարարություններ տեսանք Լաչինի միջանցքը փակվելուց մի քանի օր անց միայն: Ինչո՞ւ է աշխարհը լուռ:

-Վստահաբար կարող ենք ասել, որ եվրոպական երկրներն ու ԵՄ ինստիտուտներն ավելի ակտիվ էին 2020 թվականին, երբ սկսվեց ղարաբաղյան երկրորդ պատերազմը: Ինձ թվում է՝ Ուկրաինայի կոնֆլիկտով պայմանավորված է այս պասիվությունը: Ներկայումս ԵՄ-ն ապահովում է իր էներգետիկ պաշարները եւ անում է ամեն ինչ, որպեսզի աջակցի Ուկրաինային ՌԴ-ի դեմ պայքարում: Իհարկե, դա արդարացում չէ, քանի որ ԵՄ-ն կարող է որոշակի դեր խաղալ տարածաշրջանում եւ այդ պատճառով պետք է խառնվի, երբ կոնֆլիկտները ստեղծվում կան կրկնվում են: Այդ պատճառով ես կարող եմ միայն հույս ունենալ, որ ԵԽ նախագահ Շառլ Միշելը եւ տարբեր երկրների ղեկավարները, ինչպիսին, օրինակ, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն է, ժամանակ կգտնեն, որպեսզի Ադրբեջանին վերադարձնեն իր ուղու վրա: Մենք՝ որպես խորհրդարանականներ, պետք է բարձրացնենք այդ հարցը ինչպես խորհրդարանում, այնպես էլ դրանից դուրս՝ այլ խորհրդարանականների եւ միջազգային ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ: Որքան ավելի շատ ուշադրություն լինի այս թեմային, այնքան ավելի լավ:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՀՐԱՏԱՊ ԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԸ ԱՐԳԵԼԱՓԱԿՎԱԾ Է

«ԱՐՑԱԽՈՒՄ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՃԳՆԱԺԱՄ Է. հրատապ գրություններ եմ հասցեագրել ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան մարմիններին»,- այս մասին հաղորդագրություն է տարածել Ազգ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Ավելի քան 3 օր է՝ Ադրբեջանը արգելափակել է Արցախը Հայաստանին կապող միակ կենսական ճանապարհը: Հրատապ գրություններով ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան մարմիններին կրկին ահազանգել եմ, որ Արցախի շրջափակման Ադրբեջանի այս հանցավոր վարքագծի հետեւանքով՝

Ստեփանակերտի բժշկական կենտրոնի մի շարք հիվանդների կյանքը վտանգի տակ է, քանզի նրանք Երեւանում հրատապ բժշկական օգնության կարիք ունեն, որը հնարավոր չէ իրականացնել, քանզի Ադրբեջանը շրջափակել է Արցախը,

- սննդամթերքի, դեղորայքի մատակարարումը դարձել է անհնարին,
- բազմաթիվ կանայք, երեխաներ, ծերեր ստիպված են եղել գիշերել դրսում՝ ցուրտ ձմռան պայմաններում, որն անթույլատրելի է,
- աշխատանքի մեկնած հարյուրավոր մարդիկ զրկվել են ազատ տեղաշարժի իրավունքից եւ չեն կարողանում տուն վերադառնալ...

Միջազգային գործընկերներիս ուշադրությունն եմ հրավիրել, որ ցուրտ ձմռան պայմաններում Ադրբեջանը կասեցրել է գազամատակարարումը Արցախին, որը հումանիտար եւ տնտեսական ահաբեկչություն է, որը հետեւողականորեն կյանքի է կոչվում Արցախի խաղաղ բնակչության նկատմամբ:

Նաեւ ընդգծել եմ միջազգային կառույցների հրատապ քայլերի անհրաժեշտությունը՝ Արցախի ապաշրջափակման ուղղությամբ, որպեսզի Ադրբեջանի այս անմարդկային վարքագծի հետեւանքով շրջափակված Արցախի ավելի քան 120000 քաղաքացիներ կարողանան իրացնել իրենց համընդհանուր իրավունքները: Արցախում իրավիճակը ծայրահեղ է: Անհրաժեշտ են հրատապ քայլեր՝ ի պաշտպանություն Արցախի խաղաղ բնակչության կյանքի իրավունքի»:

ՀՐԱՀԱՆԳԵԼ Է ՀԱՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նորանշանակ նախարարը հրահանգել է դպրոցներում արգելել բոլոր տեսակի ռազմահայրենասիրական պարապմունքներն ու կրթադաստիարակչական միջոցառումները: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ մի շրջաբերական է հայտնվել, որտեղ տիկին նախարարը Երեւանի փոխքաղաքապետին ու ՀՀ բոլոր մարզպետարանների գլխավոր քարտուղարներին հրահանգ է իջեցրել խուսափել դպրոցների ռազմականացումից:

Ավելի պարզ ասած՝ դա նշանակում է հրաժարվել համագործակցել ռազմական այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Կոմանդոս ռազմամարզական ակումբը», «Զարկ» ծրագիրը, «Փոքր Միերը», ՈՄԱ (Ողջ մնալու արվեստը) ռամահայրենասիրական հասարակական կազմակերպությունը եւ այլն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ժաննա Անդրեասյանը վերոնշյալ շրջաբերականը դեռ փոխնախարար եղած ժամանակ է ստորագրել: Ի՞նչ է ստացվում. դպրոցներում, փաստորեն, բացի «Նախնական զինվորական պատրաստվածություն» (ՆԶՊ) առարկայից, դպրոցականները ռազմահայրենասիրական այլ ծրագրերի ու դասընթացների այլեւս չեն կարող մասնակցել: Սա, փաստացի, կառավարող ուժի գործելաոճն ու ձեռագիրն է՝ ինչքան հեռու հայրենասիրությունից, այնքան ավելի լավ: Փաստորեն, դեռ պետք է շնորհակալ լինենք, որ տիկին նախարարուհին չի որոշել ՆԶՊ առարկան հանել առարկայացանկից. նրա նախորդներն, ի դեպ, 2018-ի քաղաքական վերադասավորումներից հետո նման մտադրություն ունեին, հանրային ճնշման ներքո, սակայն, այդ գաղափարից, փառք Աստծո, հրաժարվեցին:

ՄՏԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

Պետական վերահսկողական ծառայությունն այս անգամ էլ որոշել է ուսումնասիրություն իրականացնել պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններում բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող 10 խոշորագույն բժշկական հատատություններում, ինչպես նաեւ մի շարք տեղական ինքնակառավարման մարմիններում եւ Հայփոստում: Իրավիճակն իսկապես ուշագրավ է, քանի որ վերջին օրերին Պետական վերահսկողական ծառայության կողմից աննախադեպ ակտիվություն է նկատվում, եւ օրեցօր ավելանում են այն գերատեսչությունները, որտեղ այս կառույցը որոշել է ստուգումներ իրականացնել: Իհարկե, տարեվերջ է, եւ Պետական վերահսկողական ծառայության ակտիվությունը կարելի է նաեւ այդ հանգամանքով բացատրել, սակայն, այս ամենից զատ, շատ կարեւոր են առաջին հերթին արդյունքները, թե, ի վերջո, ինչ բացահայտումներ կլինեն այդ ստուգումների արդյունքում:

ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆ ԱՃԽԱՏՈՒՄ Է

Դեկտեմբերի 11-ից քաղաքացիական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ, ներկայանալով որպես բնապահպան ակտիվիստներ, շինծու բնապահպանական մտահոգությունների պատրվակով փակել են Արցախը Հայաստանի եւ աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Այս ընթացքում դատապարտող եւ Ադրբեջանին Լաչինի միջանցքը բացելու կոչեր եւ հայտարարություններ հնչեցին տարբեր երկրների կողմից, սակայն, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունը, որը խաղաղապահ առաքելություն է իրականացնում հենց այդ սահմանին, մինչ երեկ լուռ էր: Միայն նախօրեին Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Մարիա Զախարովան հայտարարեց, թե Ռուսաստանը մտահոգված է Լաչինի միջանցքի փակմամբ, ակնկալում է մոտ ապագայում տրանսպորտային կապի լիարժեք վերականգնում:

ArmLur.am-ի հետ զրույցում ռուս քաղաքագետ Ալեքսանդր Սկակովը նշում է, թե այս հարցի կարգավորումը հայտարարությունների տիրույթում չէ, եւ հետեւաբար ՌԴ-ի կողմից մինչեւ այս արձագանք չէր եղել: «Այստեղ հայտարարություններով հարց չեն լուծում: Եղան հայտարարություններ ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի կողմից, բայց դրանից հետո ինչ-որ բան փոխվե՞ց. ո՛չ, քանի որ հարցի կարգավորումը գտնվում է բանակցությունների տիրույթում Մոսկվայի եւ Բաքվի միջեւ, եւ նրանք այս ընթացքում այդ բանակցություններն իրականացրել են», - նշեց նա:

Ռուս քաղաքագետը չի զարմանում մեզ մոտ առկա հակառուսական տրամադրություններից՝ ասելով, թե դա նորություն չէ Հայաստանի պարագայում: «Խաղաղապահները պետք է զուսպ վարք դրսեւորեին, չտրվեին սադրանքների, քանի որ հետեւանքները կարող էին տարբեր լինել: Ադրբեջանն այսպես նաեւ նպատակ ունի ազդել ռուս խաղաղապահների իմիջի վրա եւ տպավորություն ստեղծել, թե այնտեղ խաղաղապահներ պետք չեն, եւ հարց կառաջանար նրանց այնտեղից ժամանակից շուտ դուրս բերելու, ինչը, չեմ կարծում, թե հայկական կողմի հետաքրքրությունների տիրույթում է: Պատկերացրեք, թե այդ դեպքում ինչ կլիներ», - նշեց նա:

Նա նկատում է՝ Ադրբեջանում շատ լավ հասկանում են, որ այժմ Ռուսաստանի Դաշնության հետաքրքրությունների տիրույթում ավելի շատ Ուկրաինան է: «Ռուսաստանը վստահաբար աշխատում է, անում իր գործը, խաղաղապահները եւս, եւ պետք է թույլ չտալ, որ հետագա իրավիճակը սրվի: Ադրբեջանն օգտագործում է այն փաստը, որ Ռուսաստանը գերզբաղված է Ուկրաինայի շուրջ իրավիճակով, եւ դա հավելյալ խթան է Բաքվի համար ԼՂ-ի հարցում իր գործողությունները սրացնելու համար: Վստահ՞ եղեք, որ բանակցությունները ընթանում են, եւ պետք է հասնել նրան, որ իրավիճակն ավելի չվատանա», - հավելեց նա:

Ն.Հ.

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

ԱՃԽԱՐՀԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Արդեն 5-րդ օրն է, ինչ Ադրբեջանը փակ է պահում Արցախը ոչ միայն Հայաստանին, այլ նաեւ աշխարհին կապող հաղորդակցային միակ հանգույցը՝ Բերձորի միջանցքը: Այս օրերի ընթացքում աշխարհի տարբեր երկրներ ու կազմակերպություններ Ադրբեջանին հորդորել են անհապաղ բացել միջանցքն ու ապահովել արցախցիների բնականոն տեղաշարժը:

Դեկտեմբերի 14-ին Կանադայի արտաքին գործերի նախարարությունն էր հաղորդագրություն տարածել՝ նշելով. «Կանադան ուշադրությամբ հետեւում է Լաչինի միջանցքի փակմանը եւ դրան հաջորդող զարգացումներին»:

«Մենք կոչ ենք անում Ադրբեջանի իշխանություններին վերաբացել միջանցքը եւ ապահովել ազատ տեղաշարժը՝ խուսափելու հնարավոր հումանիտար աղետից»,- Twitter-ի էջում նման գրառում էին արել Կանադայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները:

Միացյալ թագավորության Եվրոպայի հարցերով դեսպան Լեո Դոքըրթին էլ նորից Twitter-ի էջում գրել էր. «Լաչինի միջանցքի փակումը եւ ձմռանը գազամատակարարման խաթարումը լուրջ հումանիտար հետեւանքների վտանգ է պարունակում: ՄԹ-ն հույս ունի, որ եւ՛ Ադրբեջանը, եւ՛ Հայաստանը կկատարեն հրադադարի շուրջ ստանձնած բոլոր պարտավորությունները: Տեւական կարգավորմանը հնարավոր է հասնել միայն խաղաղ, դիվանագիտական ճանապարհով»:

ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Նեդ Փրայսն էլ Բաքվին կոչ է արել վերականգնել արցախցիների ազատ տեղաշարժն ու հավելել. «Լաչինի միջանցքի փակումը լուրջ մարդասիրական հետեւանքներ ունի եւ հետ է մղում խաղաղության գործընթացը: Կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը վերականգնել ազատ տեղաշարժը: Առաջ գնալու ճանապարհը բանակցություններն են»:

Ադրբեջանի խանություններին կոչով դիմել է նաեւ ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցչի խոսնակ Պետեր Ստանոն՝ ընդգծելով, որ պետք է ապահովել միջանցքով տեղաշարժի ազատությունն ու անվտանգությունը՝ համաձայն 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության: «Հորդորում եմ հարցերը լուծել երկխոսության եւ խորհրդակցությունների միջոցով»,- նշել է ԵՄ պաշտոնյան:

Առավել խիստ ու հասցեական էր Ֆրանսիայի կոչ-հորդորը: Պաշտոնական Փարիզը Բաքվին հորդորում է առանց որեւէ նախապայմանի վերականգնել Լաչինի միջանցքով երթեւեկությունը: Ադրբեջանը, հիշեցնում է ֆրանսիական կողմը, պարտավորվել է երաշխավորել Լաչինի միջանցքով երկու ուղղություններով մարդկանց, տրանսպորտի եւ ապրանքների տեղաշարժի անվտանգությունը: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, որի խաղաղապահ զորախումբն է իրականացնում Լաչինի միջանցքի անվտանգությունը, ապա պաշտոնական Մոսկվան արդեն քանի օր շարունակ միայն պաշտպանական գերատեսչության մակարդակով է խոսում՝ ընդգծելով, որ ադրբեջանական կողմի հետ բանակցությունները շարունակվում են: Այս ամենին զուգահեռ՝ Նիդերլանդների խորհրդարանն ընդունել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը փակելու մասին բանաձեւ: Իր հերթին Հայաստանն էլ դիմել է ՄԻԵԴ՝ պահանջելով միջանկյալ միջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԳՐԱՌՈՒՄԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Լաչինի միջանցքի փակման վերաբերյալ 2 գրառում է կատարել իր սոցիալական միկրոբլոգում:

«Լաչինի միջանցքի փակումը Ադրբեջանի կողմից 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կոպիտ խախտում է, քանի որ, ըստ հայտարարության 6-րդ կետի, միջանցքը գտնվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահների վերահսկողության տակ, եւ Ադրբեջանը պետք է երաշխավորի քաղաքացիների, տրանսպորտի եւ ապրանքների տեղաշարժի անվտանգությունը»,- գրել է վարչապետը:

Երկրորդ գրառման մեջ նա նշել է. «Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակման եւ գազի մատակարարման դադարեցման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում 120 հազար մարդ հայտնվել է պատանդի կարգավիճակում: Դպրոցներն ու մանկապարտեզները ստիպված են դադարեցնել աշխատանքը. 22 հազար երեխա զրկված է կրթության իրավունքից»:

ՄԻՊ–Ը ԸՆԴՈՒՆԵԼ Է

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը դեկտեմբերի 14-ին ընդունել է ՀՀ ԱԳՆ-ի կողմից կազմակերպված «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 4-րդ գլոբալ ֆորումի մասնակիցներ ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Ֆաբիան Սալվիոլիին եւ ՄԱԿ-ի անկախ հետաքննության մեխանիզմի ղեկավար Նիքոլաս Կումջյանին: Դեկտեմբերի 14-ի հանդիպման ընթացքում Պաշտպանը եւ ֆորումի մասնակիցներն անդրադարձել են ցեղասպանության կանխարգելման գործում նոր տեխնոլոգիաների կիրառման մարտահրավերներին, հնարավորություններին եւ հեռանկարներին: Քրիստինե Գրիգորյանը կարեւորել է, որ միջազգային կազմակերպությունները չանտեսեն ցեղասպանական քաղաքականության նմանատիպ վաղ ազդակները, ինչը կլինի արդյունավետ կանխարգելման լավ միջոց: Հանդիպման ընթացքում Քրիստինե Գրիգորյանը պատասխանել է հյուրերի հարցերին, մասնավորապես՝ ներկայացրել ՄԻՊ մանդատը, գործառույթները, խոսել աշխատակազմի կատարած աշխատանքների մասին:

ՊԵԿԻՆԸ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ

Պեկինը հույս ունի, որ Հայաստանն ու Ադրբեջանը երկխոսության միջոցով համատեղ կաջակցեն տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը. այս մասին հայտարարել է Չինաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Վան Վենբինը՝ ՏԱՍՍ-ի թղթակցի խնդրանքով մեկնաբանելով Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակը: «Մենք հույս ունենք, որ երկու երկրները կամրապնդեն երկխոսությունը, ինչպես նաեւ համատեղ կաջակցեն տարածաշրջանային խաղաղությանը, կայունությանը եւ քաղաքացիների խաղաղ կյանքին»,- ասել է Վենբինը:

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Հ.Պ.-ն, 2012-2016 թվականներին զբաղեցնելով ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնը, օժանդակել է «Սոխոսենթր» ՍՊ ընկերության հիմնադիրներին եւ տնօրենին խարդախությամբ հափշտակել պետական սեփականություն հանդիսացող՝ «Երեւանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված հողամասից առանձնացված 300 քմ մակերեսով հողամասը: Արդյունքում պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 100 մլն դրամի գույքային վնաս:

Վարույթով հիմնավորվել է, որ Գ.Դ.-ն եւ Հ.Ա.-ն 2012 թվականին հիմնադրել են «Սոխոսենթր» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝Ընկերություն)՝ նպատակ ունենալով խարդախությամբ հափշտակել «Երեւանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 3230.0 քմ մակերեսով հողատարածքը, որը Պուշկին փողոցին հարող հատվածից 300.0 քմ մակերեսով ծանրաբեռնված է եղել կաթսայատնով: Այնուհետեւ տարածքը ուսումնական նպատակով օգտագործելու կեղծ պատրվակով հիմնադրումից 4 օր անց Ընկերության տնօրեն Ն.Կ.-ն Երեւանի քաղաքապետին է ներկայացրել ներդրումային ծրագիր՝ առաջարկելով Հայ գրատպության 500-ամյակի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք ճանաչվելու կապակցությամբ «Գրքի աշխարհ» բազմաֆունկցիոնալ համալիր կառուցելու համար ընկերությանը տրամադրել Կողբացի 36 հասցեում գտնվող հողամասից առանձնացված 300 քմ մակերեսով հողամասը: Փոխարենը Ընկերությունը պարտավորվել է, «Գրքի աշխարհ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցումից բացի, իրականացնել լրացուցիչ մակերեսի կառուցապատման աշխատանքներ դպրոցի պայմանները բարելավելու նպատակով: Եզրակացություն ստանալու նպատակով քաղաքապետը ներդրումային ծրագիրը հասցեագրել է նախկին նախարար Հ.Պ.-ին: ՀՀ մշակույթի նախկին նախարար Հ.Պ.-ն, տեղեկացված լինելով Ընկերության կողմից հողատարածքը ոչ ուսումնական նպատակով օգտագործելու եւ դրա վրա բազմաֆունկցիոնալ շենք կառուցելու իրական մտադրության մասին, չի առարկել ներկայացված ներդրումային ծրագրի դեմ: Ծրագրին հավանություն է տվել նաեւ «Երեւանի Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը, որն Ընկերության տնօրեն Ն.Կ.-ի եղբայրն է: Հ.Պ.-ն, իր ծառայողական լիազորություններն ի վնաս պետական շահերի օգտագործելով, 2012 թվականի դեկտեմբերի 13-ին Ընկերության հետ կնքել է «Գույքի օտարման եւ գրավի» ու «Գլխավոր կապալի» պայմանագրեր, որոնցում դիտավորությամբ չի ներառել Կառավարության որոշմամբ սահմանված պարտավորություններից «Գրքի աշխարհ» բազմաֆունկցիոնալ համալիր կառուցելու պարտավորության կատարումը («Գրքի աշխարհ» բազմաֆունկցիոնալ համալիրը, ըստ ներդրումային ծրագրի՝ պետք է արժենար 800 մլն դրամ): Այդ կերպ ՀՀ մշակույթի նախկին նախարար Հ.Պ.-ն, խոչընդոտները վերացնելով, Ընկերությանը հնարավորություն է տվել, առանց նշված պարտավորության կատարման, իր սեփականության իրավունքը գրանցել Երեւան քաղաքի Կողբացի 36 հասցեում գտնվող հողամասից առանձնացված 300 քմ մակերեսով հողամասի նկատմամբ: Այնուհետեւ ՀՀ մշակույթի նախկին նախարարը երկու նախագիծ է ներկայացրել Կառավարություն, որոնցով առաջարկել է կատարել փոփոխություն արդեն իսկ առկա որոշման մեջ, այն է՝ կատարել դպրոցի շենքի կապիտալ վերանորոգում՝ տեղեկացված լինելով, որ այն իրականացվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրով: Մեկ այլ փոփոխությամբ, «Երեւանի Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի միջնորդության հիման վրա, առաջարկվել է դպրոցին երաժշտական գործիքներ տրամադրել՝ դպրոցի մարզադահլիճի եւ այլ հատվածների հիմանորոգման փոխարեն: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերությունը կատարել է Կառավարության որոշմամբ սահմանված՝ կաթսայատան կառուցման եւ երաժշտական գործիքների տրամադրման պարտավորությունները, որպիսի պայմաններում Երեւանի Ե. Կողբացի 36 հասցեում գտնվող հողամասից առանձնացված 300 քմ մակերեսով հողամասը խարդախությամբ հափշտակվել է՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ 100 մլն դրամի գույքային վնաս: Հսկող դատախազը 2022 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ մշակույթի նախկին նախարար Հ.Պ.-ի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում: Դատախազը որոշում է կայացրել նաեւ պետական սեփականություն հանդիսացող գույքը խաբեությամբ հափշտակելու հանրորեն վտանգավոր արարքի կատարման համար հանրային քրեական հետապնդումներ հարուցել Գ.Դ.-ի, Հ.Ա.-ի, «Երեւանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն Մ.Կ.-ի, վերջինիս եղբայր Ն.Կ.-ի նկատմամբ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված օպերատիվ տվյալների իրացման արդյունքում պարզվել է, որ ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Արաբկիր վարչական շրջանի ֆինչական բաժնի ֆինիչի պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձ Ա.Լ.-ն, իր լիազորությունների սահմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված կարգով նախաձեռնելով քրեական վարույթ եւ ձեռնամուխ լինելով նախաքննությանը, նույն քրեական վարույթով առերեւույթ հանցավոր արարք կատարած անձի օգտին, իր լիազորությունների սահմաններում գործողություններ չկատարելու, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով նրան չձերբակալելու եւ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելու համար քաղաքացուց 2022 թվականի նոյեմբերի 1-ին պահանջել է 5.000.000 ՀՀ դրամ կաշառք:

Վերջինիս մայրը, չունենալով համապատասխան ֆինանսական միջոցներ, իր ծանոթներից պարտքով վերցնելով 1.000.000 ՀՀ դրամ գումար, 2022 թվականի նոյեմբերի 4-ին Երեւան քաղաքի Կոմիտասի պողոտայի 29 հասցեում գործող «KFC» արագ սննդի կետի հետնամասում գտնվող այգում այն անձամբ փոխանցել է քննիչին, այնուհետեւ 2022 թվականի նոյեմբերի 11-ին, որպես վարկային միջոց ստանալով 1.000.000 ՀՀ դրամ գումար, նույն օրը Երեւան քաղաքի վերոնշյալ վայրում այն անձամբ կրկին տվել է հիշյալ քննիչին՝ որդու օգտին իր լիազորությունների սահմաններում գործողություններ չկատարելու համար, իսկ պահանջված կաշառքի մնացած 3.000.000 ՀՀ դրամը պայմանավորվել են փոխանցել մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 16-ը:

Դեպքի առթիվ 2022 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախաձեռնվել է քրեական վարույթ:

2022 թվականի դեկտեմբերի 13-ին գաղտնի քննչական գործողություն կատարելու արդյունքում նախապես քիմիական համապատասխան միջոցներով մշակված 2.000.000 ՀՀ դրամ գումարը, որպես պահանջված կաշառքի մաս, Երեւան քաղաքի կրկին նույն վայրում քաղաքացին անձամբ փոխանցել է քննիչին, որից հետո վերջինս ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից ձերբակալվել է եւ ներկայացրել ստացված 2.000.000 ՀՀ դրամ կաշառք գումարը:

Ա.Լ-ի նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան, որը բավարարվել է: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ

ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել, թե ինչու է աշխատանքից ազատվել ԲԴԽ արդեն նախկին անդամ Ստեփան Միքայելյանը: Մասնավորապես, նա ասել է, որ 3 ամսից լրանում է իր պաշտոնավարման ժամկետը, եւ ինքը գնալու է թոշակի, ուստի այս երեք ամիսների ընթացքում պետք է հասցնի ՀՀ վճռաբեկ դատարանի գործերը ավարտին հասցնել եւ խնդրում է ազատել իրեն ԲԴԽ անդամի պաշտոնից: Նա մասնավորապես ցանկանում է իրականացնել միայն իր՝ դատավորի պարտականությունները եւ գնալ թոշակի:

Նշենք, որ ԲԴԽ անդամ Ստեփան Միքայելյանը հրաժարականի դիմում է ներկայացրել. տեղեկությունը Radar Armenia-ի հետ զրույցում հաստատել էր նաեւ Բարձրագույն դատական խորհրդի մամուլի ծառայության պետի պաշտոնակատար Լիլիթ Շաբոյանը՝ նշելով, որ նրա լիազորությունները դադարել են:

Հիշեցնենք՝ Միքայելյանը ԲԴԽ նախկին նախագահներ Ռուբեն Վարդազարյանի եւ Գագիկ Ջհանգիրյանի հայտնի հանդիպման մասնակիցն է եղել: Ավելի վաղ ArmLur.am-ը գրել է, որ ԲԴԽ-ում հրաժարականների շքերթ է սպասվում:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Աբովյան քաղաքում տատին խեղդամահ անելով սպանած 25-ամյա երիտասարդը ինքնասպանության փորձ է կատարել: Իրավապահները նրան հայտնաբերել են այն պահին, երբ նա, սավանները կապկպելով, փորձել է վերջ տալ կյանքին, սակայն կանխել են նրա գործողությունները: Մեզ հայտնի դարձավ, որ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Հիշեցնենք, որ 2022թ. դեկտեմբերի 12-ին՝ ժամը 09:10-ին, «Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապօգնությունից ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժին հաղորդում է ստացվել այն մասին, որ Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի տներից մեկում սպանություն է տեղի ունեցել:

Քննչական կոմիտեի հաղորդմամբ՝ տվյալներ են ստացվել, որ սպանությունը՝ ննջասենյակում խեղդելու միջոցով, կարող է կատարված լինել Աբովյան քաղաքի 25-ամյա բնակչի կողմից:

Դեպքի առթիվ 2022թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 14-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 48 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունների միջեւ փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել, որով կանոնակարգվում է Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ քաղաքացիների աշխատանքային գործունեությանն առնչվող մի շարք հարցեր:

Փաստաթուղթը ստորագրել են ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանն ու Արաբական Միացյալ Էմիրությունների մարդկային ռեսուրսների եւ էմիրաթիզացիայի նախարար Աբդուլռահման Ալ Ավարը: «Հուշագրի շրջանակում ՀՀ կառավարությունը հանձն է առել ապահովել աշխատողների հավաքագրումն ու Արաբական Միացյալ Էմիրություններ մեկնելու նախապատրաստումը, աշխատանքի ընդունման հետ կապված համապատասխան օրենքների, կանոնակարգերի ու ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը եւ այլն»,- նշված է հաղորդագրության մեջ: Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունն իր հերթին պարտավորվել է պաշտպանել ԱՄԷ-ում ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատողների իրավունքները՝ համաձայն երկրում գործող օրենքների: ԱՄԷ կառավարությունը հանձն է նաեւ ապահովել ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատողների՝ Արաբական Միացյալ Էմիրություններ մուտքի ու զբաղվածության համապատասխանեցումը երկրում գործող օրենքներին, ընթացակարգերին եւ կանոնակարգերին: Կողմերի միջեւ պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել համակարգող հանձնաժողով, որը 6 ամսվա ընթացքում կապահովի, որ մինչեւ Հայաստանի Հանրապետությունից ԱՄԷ մեկնելը ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատողներն ունենան աշխատանքի առաջարկ, որը պատշաճ կերպով ստորագրված կլինի ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի կողմից: Հուշագրի՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, կողմերի իրավասու մարմինները կստորագրեն նաեւ իրականացման ընթացակարգերը:

ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

Կառավարությունն իր դեկտեմբերի 15-ի նիստում ընդունել է որոշում, որով առաջարկվում է կատարել վերաբաշխում եւ 93,974.6 հազար դրամ հատկացնել 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից սովորողների, ինչպես նաեւ պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց սովորող երեխաների եւ սովորող ամուսինների՝ 1 ուսումնական տարվա 1 կիսամյակի ուսման վարձի փոխհատուցմանը: Այդ շահառուների ուսման վարձի փոխհատուցում տրամադրվել է կառավարության մի շարք որոշումներով, որի շրջանակներում ուսման վարձի փոխհատուցում ստացել է բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 7318 ուսանող, որոնց ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը կազմել է 1,595.930.7 հազար դրամ: Ըստ հիմնավորման՝հավաքագրման աշխատանքները 2022 թ. դեռեւս շարունակվում են, քանի որ կան պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից սովորողներ:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ ԿԿՐԿՆԱՊԱՏԿՎԻ

Սպորտային մեծ նվաճումներ ունեցող մարզիկներին եւ նրանց մարզիչներին պետության կողմից տրվող միանվագ գումարը կկրկնապատկվի:

ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ որոշումն ընդունվել է Կառավարության դեկտեմբերի 15-ին կայացած նիստում: Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նորանշանակ նախարար Ժաննա Անդրեասյանը: Մինչ հարցի զեկուցումը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորել է Ժաննա Անդրեասյանին նախարարի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ եւ նրան մաղթել արդյունավետ աշխատանք:

2022 թվականին Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող մարզիկները ցուցաբերել են աննախադեպ բարձր արդյունք: Դեկտեմբերի 6-ի դրությամբ մեր մարզիկներն արդեն նվաճել էին 298 մեդալ, որից 103-ը՝ոսկե, 69-ը՝արծաթե, 126-ը՝ բրոնզե: Այժմ արդեն մեդալների թիվը հատել է 303-ի սահմանագիծը, որն աննախադեպ ցուցանիշ է, քանի որ մինչ այդ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել էր 2019 թվականին՝222 մեդալ:

Որոշմամբ նախատեսվում է օլիմպիական, պարալիմպիկ, սուրդօլիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված, ինչպես նաեւ ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտի, շաշկի, ուշու եւ շախմատ մարզաձեւերի միջազգային առաջնություններում, աշխարհի եւ Եվրոպայի խաղերում 1-3-րդ տեղեր գրաված մարզիկներին, հավաքական թիմերի գլխավոր մարզիչներին, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչներին եւ ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչներին շնորհվող դրամական մրցանակների չափը կրկնապատկել: Որոշումը տարածվում է նաեւ հաշմանդամային սպորտով զբաղվողների վրա:

Աշխարհի առաջնություններում 1-3-րդ տեղեր գրաված մարզիկները կստանան համապատասխանաբար 10 մլն, 7 մլն եւ 4 մլն դրամ մրցանակ՝մինչ այս տրվող 5 մլն, 3,5 մլն եւ 2 մլն դրամ մրցանակի փոխարեն: Ազգային հավաքական թիմերի գլխավոր մարզիչները եւ մեդալակիր մարզիկների անձնական մարզիչները կստանան համապատասխանաբար 5 մլն, 3,5 մլն եւ 2 մլն դրամ՝ նախկին 2,5 մլն, 1,75 մլն եւ 1 մլն դրամի փոխարեն: Ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչները կստանան համապատասխանաբար 2 մլն, 1,4 մլն եւ 800 հազար դրամ:

Եվրոպայի առաջնություններում 1-3-րդ տեղեր գրաված մարզիկները կստանան համապատասխանաբար 6 մլն, 3,6 մլն եւ 2,4 մլն դրամ՝նախկին 3 մլն, 1,8 մլն եւ 1,2 մլն դրամի փոխարեն: Կավելացվի նաեւ Եվրոպայի առաջնությունների մարզիչների, հավաքական թիմերի երկրորդ մարզիչների եւ մեդալ նվաճած մարզիկների անձնական մարզիչների դրամական մրցանակի չափը:

Վերոնշյալ դրամական մրցանակները ներառում են օրենքով սահմանված հարկերը եւ տուրքերը: Նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ բարձր նվաճումներ ունեցող մարզիկների դրամական մրցանակների կրկնապատկման նպատակով ՀՀ ԿԳՄՍՆ 2022 թվականի բյուջեում կատարվել է 557 մլն 630 հազար դրամի վերաբաշխում: Մինչ այդ նույն նպատակի համար նախատեսվել էր մոտ 150 մլն դրամ գումար: Վերաբաշխման արդյունքում ՀՀ մարզական պատիվը բարձր պահած մարզիկների եւ մարզիչների խրախուսման մրցանակային ընդհանուր ֆոնդը կկազմի 707 մլն 630 հազար դրամ: Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ ծրագրի շուրջ 170 շահառուի անվանացանկն առաջիկայում կհաստատվի:

Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ գործադիրը երեկ չզեկուցող հարցերի փաթեթում ներառել է նաեւ «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի պարգեւատրման ֆոնդի ավելացման հարցը: Ըստ այդմ՝ տարվա լավագույն մարզիկներին տրվող մրցանակները կավելանան հարկերի չափով՝ յուրաքանչյուրին կտրվի 6 մլն 330 հազար դրամ գումար՝ներառյալ հարկերն ու տուրքերը, ինչը նշանակում է, որ օրենքով սահմանված պահումներից հետո յուրաքանչյուր մարզիկ կստանա 5 մլն դրամ:

Ամփոփելով հարցը՝ վարչապետը նշել է, որ սպորտի ոլորտում արձանագրված հաջողություններին նպաստել է պետական քաղաքականությունը, որը լինելու է շարունակական: Հայաստանի՝ մինչեւ 2050 թվականի զարգացման տեսլականում ամրագրված է 258 օլիմպիական մեդալ նվաճելու հավակնոտ նպատակը, եւ ձեռնարկվող քայլերը համահունչ են նշված թիրախին:

ԼՈՒՐԵՐ

«ԳՅՈՒՂՈՒՄ ԽՈՒՃԱՊ ՉԿԱ»

«Գյուղում, փառք Աստծո, ամեն ինչ լավ է, կրակոցները մեզ մոտ չեն լսվել»,- ArշLur.aշ-ի հետ զրույցում ասաց Նորաբակի վարչական ղեկավար Վազգեն Ասատրյանը:

«Գյուղում տրամադրությունները նորմալ են, խուճապ չկա»,- ասաց նա:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 15-ին՝ժամը 01:10-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել Նորաբակի եւ Սրաշենի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

Հայկական կողմը կորուստներ չունի:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Դեկտեմբերի 11-ից քաղաքացիական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ, ներկայանալով որպես բնապահպան ակտիվիստներ, շինծու բնապահպանական մտահոգությունների պատրվակով փակել են Արցախը Հայաստանի եւ աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը:

Այս ընթացքում դատապարտող եւ Ադրբեջանին Լաչինի միջանցքը բացելու կոչեր եւ հայտարարություններ հնչեցին տարբեր երկրների եւ կազմակերպությունների կողմից:

ArmLur.am-ը դիմել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակ՝հասկանալու համար, թե ինչ մարդասիրական քայլեր է իրականացրել կոմիտեն: Ի պատասխան՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակի հաղորդակցման եւ կանխարգելման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունին ընդգծեց, թե իրենք շարունակում են հետեւել տիրող իրավիճակին:

«Կարմիր խաչի կոմիտեն, գտնվելով Հայաստանում, շարունակում է հետեւել Լաչինի միջանցքում տիրող իրավիճակին եւ մարդասիրական նպատակներով երկխոսություն իրականացնում, սակայն իրավիճակի հետ կապված ցանկացած այլ մեկնաբանություն այս պահին հրաժարվում եմ տրամադրել»,- նշեց նա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 20-ը ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Աջափնյակ, Մ. Մազմանյան փողոց, 14 շենք, 1 հասցեում գտնվող 59,6 ք.մ բնակարան եւ 13,4 ք.մ. ինքնակամ կառուցված շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 22600000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Չարենցի փողոց, 16-1 հասցեում գտնվող 151,15 ք.մ. բնակելի տուն, 6,99 ք.մ. մառան, 5,92 ք.մ. թռչնանոց, 50,39 ք.մ. ավտոտնակ եւ 0,05205 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝14600000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Արագածի 1-ին թաղամաս, 2 շենք, 16 հասցեում գտնվող 63,13 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9900000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 03.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 03.02.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՆՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Դեկտեմբերի 7-ին «Ժողովուրդ» օրաթերթի անունից տեղեկատվական հարցում եմ ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին՝ նրան տալով հետեւյալ հարցերը.

1. Տավուշի մարզպետարանի շենքի մուտքին ի՞նչ նպատակով է տեղադրվել մետաղյա արգելափակոց, եւ ե՞րբ է այն հանվելու:

2. Դիլիջան-Իջեւան ավտոճանապարհին հաճախ են հայտնվում առանց հսկողության ձիերի երամակներ, կովերի նախիրներ, որոնք խոչընդոտում են տրանսպորտային միջոցների երթեւեկին, ստեղծում վթարային իրավիճակներ: Տավուշի մարզպետարանը եւ անձամբ Դուք ի՞նչ միջոցներ եք ձեռնարկել այդ խնդիրը լուծելու համար:

3. «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամը ստեղծվել է Տավուշի մարզպետարանի համագործակցությամբ: Ավելի քան 10 տարի Լուսաձորի տարածքում գործող «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի անասնաֆերմայի եւ պանրագործարանի աշխատանքների հետեւանքով միջպետական ավտոճանապարհին ծանր գարշահոտ է տիրում, որը խեղդում է միջպետական ավտոճանապարհով անցնողներին: Մարզպետարանը նախկինում այդ կապակցությամբ ստեղծել է աշխատանքային խումբ, այդ գարշահոտը վերացնելու համար Տավուշի մարզպետարանը եւ անձամբ Դուք ի՞նչ միջոցներ եք ձեռնարկել:

4. 2020թ. ամռանը Իջեւանի գինու, կոնյակի գործարանը ապօրինի մեծ շինարարություն է արել, ավերել Աղստեւ գետի հունը եւ ափը, որի հետեւանքով Իջեւանի դենդրոպարկը զրկվել է ոռոգման ջրից, դենդրոպարկի հազվագյուտ եւ արժեքավոր թփերի եւ ծառերի տեսականու կեսը չորացել է: Տավուշի մարզպետարանը եւ անձամբ Դուք ի՞նչ եք ձեռնարկել Իջեւանի

գինու, կոնյակի գործարանի կատարած այդ ապօրինությունների վերաբերյալ:

5. Տավուշի մարզում ներկայումս քանի՞ աղբավայր է գործում, դրանցից քանի՞սն ունի համապատասխան հողահատկացում, քանի՞սն է համապատասխանում ՀՀ օրենքներով ներկայացվող պահանջներին:

6. Տավուշի մարզով ձգվող Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրին ներկայումս քանի՞ հասարակական զուգարան է գործում, ճանապարհի ո՞ր հատվածներում են դրանք գտնվում, ո՞ւմ վերահսկողությամբ, պահպանության ներքո են գործում այդ զուգարանները:

Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Արգելափակոցի առկայության պարագայում առավել համակարգված եւ արդյունավետ է դարձել քաղաքացիների հետ աշխատանքը: Մարզպետարանի առաջին հարկում գործող տեղեկատու-ընդունարանի աշխատակիցը, լսելով մարզպետարան այցելած քաղաքացուն, նրան ուղղորդում է համապատասխան ստորաբաժանում, զգուշացնում է նաեւ տվյալ ստորաբաժանման աշխատակիցներին, որ քաղաքացի է մոտենում: Անհրաժեշտության դեպքում օգնում է նաեւ դիմում գրել, տեղում անմիջապես կատարում է անձնագրի եւ այլ փաստաթղթերի պատճենահանումը: Ձեր հարցման երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով առաջարկում ենք դիմել Իջեւանի համայնքապետարանին, քանի որ հարցերը գտնվում են համայնքապետարանի գործառնույթների տիրույթում, սակայն մարզպետարանի աշխատակիցները մարզպետարանի իրավասությունների շրջանակներում իրականացնում են մշտադիտարկում: Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհներին անմիջապես կից տեղակայված, պահպանվող ու շահագործվող հասարակական զուգարանները գործում են հիմնականում ավտոգազալցակայաններում, որոնք վերանորոգվել են ՀՀ կառավարության կողմից տրված տեխնիկական պահանջներով եւ սպասարկում են քաղաքացիներին (զբոսաշրջիկներին)»:

Տավուշի մարզում գործող աղբավայրերի վերաբերյալ հարցին ինչո՞ւ պետք է պատասխանի Իջեւանի համայնքապետարանը: Դիլիջան-Իջեւան ավտոճանապարհին առանց հսկողության նախիրներ եւ երամակներ հայտնվում են առավելապես Դիլիջան խոշոր համայնքի տարածքում. ինչո՞ւ այդ հարցին միայն Իջեւանի համայնքապետարանը պիտի պատասխանի: Միջպետական ավտոճանապարհով երթեւեկող, զուգարանի կարիք ունեցողները, այդ թվում՝ զբոսաշրջիկները, ստիպված պետք է գնան ԱԳԼՃԿ, եթե նույնիսկ իրենց ավտոմեքենան ոչ թե գազ, այլ բենզին է օգտագործում: Այսպիսի անտրամաբանական պատասխաններ՝ մարզպետարանից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Անշարժ գույքերի աճուրդ-վաճառք

«Ստաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 10.01.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով՝

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

-Մեկնարկային գին՝4,199,040 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2161076:

- Մեկնարկային գին՝3,382,560 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

-Մեկնարկային գին՝1,458,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2140468:

-Մեկնարկային գին՝1,224,720 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2290379:

- Մեկնարկային գին՝1,786,050 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երեւանյան փողոց, հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2186432:

-Մեկնարկային գին՝816,480 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2430110:

- Մեկնարկային գին՝5,394,600 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

-Մեկնարկային գին՝1,625,670 ՀՀ դրամ:

Լոտ 10- Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝1,796,985 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «MITSUBISHI» մակնիշի, MONTERO SPORT 3.0 տիպարի, 2000թ. արտադրության, 104 LL 11 պետհամարանիշով, սեւ գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝JA4LS21HXYP038422, գտնվելու վայրը՝ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝1,239,300 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՃԳՆԱԺԱՄ

ՀԱՅՏՆԻՆԵՐԸ՝ «ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ» ՄԱՍԻՆ

Ինչպես արդեն գիտենք, դեկտեմբերի 12-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, ադրբեջանական կողմը, խախտելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի դրույթները, բնապահպանական պատճառաբանություններով փակել է Արցախն աշխարհին կապող կյանքի միակ ճանապարհը՝ ոտնահարելով քաղաքացիական բնակչության կենսական շահերն ու իրավունքները: Այս պահին շուրջ 120 հազար բնակիչ փաստացի գտնվում է շրջափակման մեջ ադրբեջանցիների կողմից:

Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակման պաճառով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների երթեւեկության արգելափակումը առաջացնում է Արցախի բնակիչների մի շարք հիմնարար իրավունքների խախտումներ, բացի այդ, երեկ երեկոյան Ադրբեջանը խափանել է նաեւ Արցախի գազամատակարարումը:

Արցախում կատարվող իրադարձություններից անմասն չեն մնում նաեւ հայ հայտնիները, որոնք համացանցային տիրույթում բարձրաձայնում են Արցախում տիրող իրավիճակի մասին եւ դիմում միջազգային կառույցներին:

Ստորեւ ArmLur.am-ը ներկայացնում է նրանց արձագանքները:

Երգչուհի Էմմի. «Մեր հայրենիքը յուրացնում են, էլ ուր մնաց՝ երգը ջյուրացնեն»:

Հաղորդավարուհի, դերասանուհի Նազենի Հովհաննիսյան. «Մեր երկրում պատկան մարմին չկա, անպատկան են միայն ու անպատկառ»:

Դերասան Գուրգեն Սարգսյան. «Արցախում արդեն չորս օր է՝ գազ չկա, բայց ոգի կա, ուժ կա, արժանապատվություն կա, իսկ մեզ մոտ գազ կա»:

Երգիչ, դերասան, հումորիստ Արամ MP3-ն «Ինստագրամ»-ի իր էջում գրառում է արել ադրբեջանցիների կողմից Լաչինի միջանցքը փակելու վերաբերյալ. «Ադրբեջանի կառավարությունը եւս մեկ անգամ ցույց է տալիս մարդկության եւ մարդու իրավունքների նկատմամբ իր անարգանքը հայ ժողովրդի հետ հարաբերություններում: Երկու օր առաջ նրանք փակել են Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը, ինչպես անցյալ տարի, եւ անջատել գազամատակարարումը բնապահպանական նախաձեռնության պատրվակով՝ անելով հնարավոր ամենը, ինչն անհնար է դարձնում հայերի կյանքն այնտեղ: Ձմռան ամիսներին գազամատակարարման դադարեցումը կարող է աննախադեպ հումանիտար ճգնաժամի պատճառ դառնալ», - հրապարակած լուսանկարին կից գրել է նա:

Հիշեցնենք, որ Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը նախաձեռնել է բողոքի ակցիաներ Հայաստանում հավատարմագրված ՄԱԿ անվտանգության խորհրդի մշտական անդամների դեսպանատների եւ ՀՀ-ում ԵՄ պատվիրակության հայաստանյան գրասենյակների դիմաց:

Դեկտեմբերի 15-ին՝ ժամը 01:10-ի սահմաններում, Ադրբեջանի ՋՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել Նորաբակի եւ Սրաշենի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» Գ

Silicon Mountains 2022-Ի 4-ՐԴ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԸ

Երեւանում կայացավ Silicon Mountains 2022 միջազգային տեխնոլոգիական 4-րդ գագաթնաժողովը, որը համախմբել էր ֆինանսական ու տեխնոլոգիական ընկերությունների ներկայացուցիչներին եւ այս անգամ նվիրված էր տնտեսության տարբեր ճյուղերում խելացի լուծումների կիրառմանը:

Միջոցառման կազմակերպիչ Տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության տնօրեն Էդուարդ Մուսայելյանը ողջույնի իր խոսքում վստահեցրեց, որ քննարկումների ընթացքում չեն խոսելու տեխնիկական լեզվով, այլ գնահատելու են ներկան եւ խոսելու են ապագայի մասին. «Մեր պանելային քննարկումներին մասնակցություն ունեցող բիզնեսի ներկայացուցիչների հետ քննարկելու ենք, թե բիզնեսին ինչ առավելություններ է տալիս խելացի լուծումների կիրառումը, եւ որոնք են զարգացման հեռանկարները»:

Միջոցառման ընթացքում կայացավ 4 պանելային քննարկում՝նվիրված խելացի կառավարմանը, խելացի տնտեսությանը, խելացի բանկային համակարգին ու խելացի ենթակառուցվածքներին:

Միջոցառման գործընկեր «Ամերիաբանկ»-ի գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը «Խելացի բանկային համակարգ» խորագրով քննարկմանն անդրադարձավ նաեւ «Ամերիաբանկ»-ի թվային փոխակերպման ուղուն, որը սկսվել է դեռ 2018թ.-ից. «Սա երկար ճանապարհ է, որն ունի սկիզբ, բայց չունի վերջ: Այն ունի մշտական ընթացք, որի պարագայում, տարբեր իրավիճակային փոփոխություններից ելնելով, կազմակերպությունները նույնպես փոփոխվում են»,- նշեց նա՝ հավելելով, որ նաեւ այդ փոփոխությունների շնորհիվ է, որ այս տարի «Ամերիաբանկ»-ը միանգամից երեք հեղինակավոր պարբերականների՝ Global Finance-ի, Euromoney -ի եւ Financial Times -ի The Banker -ի կողմից ճանաչվել է տարվա լավագույն բանկը Հայաստանում:

Պանելային քննարկումների մասնակիցները կիսվեցին իրենց փորձով ու տեսլականով, ինչպես նաեւ ներկայացրին համաշխարհային միտումները թվայնացման ոլորտում, Հայաստանի տեղն ու դերը այդ զարգացումներում եւ այլն:

Կարեւորելով նման հանդիպումների դերը՝ ՏՀՏ գործատուների միության նախագահ Արմեն Բալդրյանը նշեց, որ քննարկումների արդյունքում ձեւավորված տեսակետը փաթեթային առաջարկի տեսքով ներկայացվելու է ՀՀ կառավարությանը, մասնավոր հատվածին եւ բոլոր շահագրգիռ կողմերին:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն առաջատար ֆինանսական -տեխնոլոգիական հաստատություն է եւ ՀՀ տնտեսական ոլորտի առավել նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: «Ամերիաբանկ»-ը ներկայանում է նորարար ու թվային միջավայրով՝էկոհամակարգով, որը մեկտեղում է ֆինանսական եւ ոչ ֆինանսական ծառայությունները եւ հնարավորություն ընձեռում բոլոր հիմնական ուղղություններով ստանալ հարմարավետ եւ հնարավորինս արագ ֆինանսավորում: Հաշվի բացումից մինչեւ քարտի տրամադրման եւ ֆինանսավորման համար դիմելու ամբողջ ուղին այժմ հնարավոր է անցնել էկոհամարգի առցանց միջավայրում:

«Ամերիաբանկ»-ն առաջնորդվում է հաճախորդամետ եւ բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությամբ՝ թվային, ժամանակակից ու անվտանգ միջավայրում ապահովելով սպասարկման բարձր որակ:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ԵԹԵՐԱՇՐՋԱՆ

«Մատանիների տիրակալը. ուժի մատանիները» սերիալի երկրորդ եթերաշրջանը կղեկավարի կանանցից կազմված ռեժիսորների թիմը:

Ութ դրվագից բաղկացած եթեաշրջանի ռեժիսորական թիմում կաշխատեն Շառլոտա Բրանդսթրոմը, Սանա Համրին եւ Լուիզ Հուպերը: Լրատվականի տվյալներով՝ Բրանդսթրոմը ներգրավված է եղել նաեւ առաջին եթերաշրջանի աշխատանքներին, իսկ երկրորդ եթերաշրջանում նա կնկարահանի 4 դրվագ, իսկ գործընկերները կաշխատեն երկուական դրվագի ստեղծման համար:

«Մատանիների տիրակալը. ուժի մատանիները» նախագծում գործողությունները տեղի են ունենում «Հոբբիթ»-ի եւ «Մատանիների տիրակալ-ի» իրադարձություններից մի քանի հազար տարի առաջ:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԸ՝ ՎՏԲ–ՈՒՄ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը պարզեցրել է սպառողական վարկերի տրամադրումը:

«ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդները կարող են ստանալ սպառողական վարկ՝ առանց եկամուտների եւ զբաղվածության հաստատման՝ իրենց գործող դրական վարկային պատմության հիման վրա: Վարկը ձեւակերպելու համար անհրաժեշտ են միայն անձնագիր եւ սոցիալական քարտ: Պարզեցված գործընթացով վարկը հասանելի է 19.5%-ից 20.2% տարեկան տոկոսադրույքով (փաստացի տոկոսադրույք՝ 22.5%-24%): Վարկի նվազագույն գումարը 100 հազար ՀՀ դրամ է, ժամկետը՝ 24-ից 60 ամիս: «Սպառողական վարկերը շարունակում են մնալ ամենապահանջված պրոդուկտներից մեկը մեր հաճախորդների համար, եւ չորրորդ եռամսյակում մենք նկատում ենք վերջիններիս նկատմամբ պահանջարկի աճ: Դեկտեմբերի առաջին շաբաթում, նոյեմբերի նույն ժամանակահատվածի համեմատ, գործարքների ծավալն աճել է 3 անգամ: Ակնկալում ենք, որ վարկերի տրամադրման պարզեցումը լրացուցիչ աջակցություն կլինի մեր վարկառուներին ամանորյա տոների նախօրեին իրենց ֆինանսական խնդիրները լուծելու հարցում: Միեւնույն ժամանակ մենք շարունակում ենք հետեւողական լինել հաճախորդների վարկային գերծանրաբեռնվածությունը կանխելուն, որի շրջանակում նաեւ պահանջում ենք հաճախորդների շարունակական դրական վարկային պատմության հաստատում»,- նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նահագահի տեղակալի Ժ/պ Տարաս Կլադչենկոն: Սպառողական վարկ ստանալու համար հաճախորդները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան» բանկի ցանկացած մասնաճյուղ: Վարկային միջոցները տրամադրվում են հաճախորդի հաշվին: Վարկի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ բանկի պաշտոնական կայքում կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն 87-87 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

● *Դեկտեմբերի 17-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Էվոլյուցիա» հումորային ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է լրացուցիչ եւ հատուկ ընդմիջումների տեւողությունը:

Ռոմելյա Սարդարյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հաշվի առնելով աշխատանքի պայմանները՝ աշխատանքային օրվա ընթացքում աշխատողներին կարող է տրամադրվել հանգստի համար լրացուցիչ ընդմիջում: Մինչեւ տասնութ տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տեւողությունը գերազանցում է 4 ժամը, աշխատաժամանակի ընթացքում պետք է տրվի հանգստի համար լրացուցիչ ընդմիջում՝ նվազագույնը 30 րոպե: Հատուկ ընդմիջումներ պետք է տրամադրվեն, եթե աշխատանքը կատարվում է պլյուս 40 աստիճան ցելսիուսից բարձր կամ մինուս 10 աստիճան ցելսիուսից ցածր օդի ջերմաստիճանային պայմաններում, ինչպես նաեւ ծանր ֆիզիկական կամ մտավոր եւ հուզական գերլարված բնույթ կրող կամ առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ պայմաններում:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լրացուցիչ եւ հատուկ ընդմիջումները ներառվում են աշխատաժամանակում, իսկ դրանց տրամադրման կարգը սահմանվում է ներքին կարգապահական կանոններով, աշխատանքի ժամանակացույցով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով: Լրացուցիչ եւ հատուկ ընդմիջումների քանակը, տեւողությունը եւ հանգստանալու տեղը նախատեսվում են կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կազմակերպվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտի բռնագանձումը եւ օգտագործումը:

Լիդա Լալայան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտը բռնագանձվում է սույն օրենսգրքի 69-71-րդ հոդվածներին համապատասխան եւ վճարվում է երեխաների խնամակալին (հոգաբարձուին): Առանց ծնողական խնամքի մնացած եւ դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող երեխաների համար ծնողներից բռնագանձվող ալիմենտները փոխանցվում են այդ կազմակերպությունների հաշվին, որտեղ դրանք հաշվառվում են յուրաքանչյուր երեխայի համար առանձին:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված կազմակերպությունները կարող են այդ գումարները պահել բանկում: Ալիմենտի գումարի շրջանառությունից ստացված եկամտի հիսուն տոկոսը օգտագործվում է նշված կազմակերպություններում երեխաներին պահելու համար: Կազմակերպությունը, երբ երեխան թողնում է այն, նրա անունով ստացված ալիմենտի գումարը եւ այդ գումարի շրջանառությունից ստացված եկամտի հիսուն տոկոսը փոխանցում է երեխայի անվամբ բացված բանկային հաշվին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ծանրամարտի կանանց հավաքականի անդամ Հռիփսիմե Խուրշուդյանը աշխարհի առաջնությունում 4-րդն է: Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում ընթացող աշխարհի առաջնության կանանց 87 կգ քաշային կարգում Խուրշուդյանը պոկեց 108 կգ եւ հրեց 130 կգ: Երկամարտի 238 արդյունքով Խուրշուդյանը գրավեց 4-րդ տեղը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.12.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: